



«ԺՈՂՈՎՆԵՐ, ՀԱՆՐԱՀԱՎԱՔՆԵՐ, ԵՐԹԵՐ ԵՎ  
ՑՈՒՅՑԵՐ ԱՆՅԿԱՅՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՎԵՐԱՆԱՅՎԱԾ  
ՏԱՐԲԵՐԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ  
ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ  
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ  
ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ  
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ

ՓՈՐՁԱԳԵՏ՝ ՋԵՐԵՄԻ ՄԱՔԲՐԱՅԴ

Վարչավա  
18-րդ ապրիլի, 2004թ.

**«ԺՈՂՈՎՆԵՐ, ՀԱՆՐԱՀԱՎԱՔՆԵՐ, ԵՐԹԵՐ ԵՎ ՅՈՒՅՅԵՐ  
ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ  
ՎԵՐԱՆԱՅՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ  
ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ**

**Ներածություն**

Վերանայված նախագիծն էապես բարելավվել է նախորդ տարբերակի համեմատ թե կառուցվածքի կազմակերպման, թե արձանագրված մի շարք պրոբլեմների վերացման իմաստով, որոնց ուղղությամբ տեքստի որոշ դրույթներ կամ դուրս են բերվել, կամ փոփոխվել: Ըստ երևույթին, նախորդ տարբերակի վերաբերյալ ներկայացված դիտողություններին վերաբերվել են լրջորեն: Այնուհանդերձ, չնայած որ ներկայում առկա նախագիծը շատ ավելի ընդունելի է, այն շարունակում է պրոբլեմահարույց մնալ թույլատրման/ծանուցման հարցում իշխանությունների որդեգրած դիրքորոշան մասով, քանի որ ինչպես և նախկին տեքստում, այս տարբերակով նույնպես չեն թույլատրվում սպոնտան գանգվածային միջոցառումները, և երթևեկության խցանման և «մրցող» ցույցերի հնարավոր պրոբլեմները ոստիկանական աշխատանքի արդյունավետ մեթոդներով հաղթահարելու փորձ կատարելու պարտականությունը նախկինի նման ամրագրված չէ: Չնայած որ հակացույցերի առնչությամբ եղած դժվարությունների մի մասը հաղթահարվել է, շարունակում է բացակայել այն տպավորությունը, որ դա իրավաչափ միջոցառում է, որի առնչությամբ նշանակություն կարող են ունենալ միմիայն հասարակական կարգուկանոնի պահպանման խնդիրները: Յանկալի կլիներ թույլատրման/ծանուցման պահանջը փոփոխել, որպեսզի թույլատրում պահանջվեր միայն այն դեպքում, երբ լիազոր մարմինը փաստացի բացահայտել է այն պրոբլեմները, որոնց կապակցությամբ պահանջվել է հավաք կազմակերպելիս հաշվի առնել ոստիկանական հսկողության կոնկրետ կարիքները , և որպեսզի արգելք կիրառվեր միայն այն դեպքում, երբ խնդիրը հնարավոր չէ ոստիկանական հսկողության միջոցով հաղթահարել: Յանկալի կլիներ, որպեսզի լուծվեին նաև ստորև արծարծվող խնդիրները:

**Հոդված 1**

Լավ է այն, որ 1-ին պարբերությունն արդեն պարունակում է «քաղաքացի» հասկացության սահմանումը, և ավտոք է որ հնարավոր լինի խուսափել օրենքի նախագծով կարգավորվողներին շփոթություն պատճառելուց:

2-րդ պարբերությունն ավելի հստակ է, չնայած որ ինչպես և նախկինում, մի փոքր կրկնություն է պարունակում:

**Հոդված 2**

Այս հոդվածով լուծվում է օրենքի սկզբնամասում հասկացությունների սահմանմանը նվիրված ընդգրկուն դրույթ ունենալու խնդիրը, և դրա բովանդակությունն ընդհանուր առմամբ պարզ է, սակայն «հրապարակային միջոցառման» հասկացության սահմանման «խաղաղ և յուրաքանչյուրի մասնակցությունն ապահովող» տարրն ավելորդ է՝ հաշվի առնելով 1-ին

հողվածը: «Ունդհանուր օգտագործման տարածքի» հասկացության սահմանումը հիմա շատ ավելի հստակ է, սակայն «հրապարակային միջոցառումը» բնութագրելու համար նախկինի նման օգտագործվում է դրա նպատակների թվարկումը: «Մասնակցի» հասկացության սահմանումը փարատում է արտահայտված մտահոգությունները, սակայն «ներթերի» սահմանման մեջ, ինչպես և նախկինում, չի պարզաբանվում մեկնարկային կետի հստակեցման խնդիրն այն դեպքերում, երբ դա կատարվում է տրանսպորտային միջոցով (սա էական է, եթե միջոցառումը թույլատրված չէ), իսկ «տոնակատարությունների» և դրան հաջորդող մյուս հասկացությունները պարզ չեն:

### **Հոդվածներ 3 և 4**

Սրանք «այլ միջոցառումների» վերաբերյալ շատ ավելի հստակ դրույթներ են, քան նախկինում, սակայն դրանց և «հրապարակային միջոցառումների» նկատմամբ վերաբերմունքի տարբերակման մտահոգությունը պահպանվում է:

### **Հոդված 5**

Ցույցերը խոչընդոտող քաղաքացիների վերաբերյալ դրույթի հանումը նշանակում է, որ վերացվել է հակացույցեր անցկացնելու ճանապարհին հնարավոր խոչընդոտներից մեկը:

5-րդ կետում կրճատվում է կազմակերպչի փոփոխության վերջնաժամկետը, որը տվյալ խնդրում մեծացնում է ճկունությունը:

6-րդ կետում, ինչպես և նախկինում, «ներկա» լինելու իմաստը բավականաչափ պարզ չէ:

### **Հոդված 6**

Ուրախացնող է այն փաստը, որ հասարակական բարքերի կատարումն ապահովելու պարտականությունը հանվել է:

1(1) կետում, ինչպես և նախկինում, հավաքի նախատեսվող վայրի առնչությամբ «ընտրել» բառի փոխարեն օգտագործվում է «առաջարկել» բառը, և 1(3) կետի ձևակերպման մեջ շարունակում է մնալ պոտենցիալ պրոբլեմ հակացույց կազմակերպելու համար: Ինչպես և նախկին տեքստում, 1(6) կետից պարզ չէ, թե արդյոք տեղեկատվություն տարածելու՝ կազմակերպչի իրավունքը նախատեսելու հետևանքով ուրիշներին արգելվում է հավաքի մասին տեղեկություններ տարածելը:

2(3) կետում այժմ ամրագրվել է օրենքի կատարումն ապահովելու պարտականության պատշաճ կերպով մեղմված տարբերակ:

3-րդ կետում պատշաճ կերպով մեղմվել է այն պահանջը, որ կազմակերպիչները ներկա գտնվեն, սակայն ինչպես և նախկինում, բացակայությունը որոշակի պատճառներով հարգելի համարելու հիմքեր նախատեսված չեն:

### **Հոդված 7**

Օգտակար է, որ 2-րդ կետում հստակեցվում է բարձրախոսներ օգտագործելու թույլատրելիությունը, իսկ 6-րդ կետում որդեգրվում է առավել չափավոր մոտեցում այն հանգամանքներին, որոնցում դրանք (գոչելը և վանկարկելը) կարող են արգելվել, իսկ «շրջակայք» բառի փոխարեն նախընտրելի է օգտագործել «անմիջական հարևանությամբ գտնվող վայրեր» բառերը:

Նախկինի պես անպարզ է մնում, թե արդյոք հարգելի պատճառով արդարացումը հնարավոր է 7-րդ կետով մասնակիցների վրա դրված պարտականությունների խախտման համար:

### **Հոդված 8**

Վերնագրի կողմնորոշումը պատշաճ կերպով վերափոխվել է, սակայն ես նախկինի նման վերապահումներ ունեմ տեսնում այդ դրույթի տեղի վերաբերյալ, չնայած որ դրանք լուրջ վերապահումներ չեն՝ հաշվի առնելով լուրջ բարելավումներն այլ մասերում: «Զենքի» ցուցադրման վրա կատարված հղումը և նման մյուս հղումները հանելը ողջունելի է:

2(5) կետը և 14(3) հոդվածն այժմ արդեն դադարեցման հարցում ֆորմալ կերպով առաջնայնություն են վերագրում ոստիկանության դերին, սակայն հաշվի առնելով, որ լիազոր ներկայացուցիչը շարունակում է ներկա գտնվել, դեռևս անհրաժեշտ է պարզել, թե արդյոք սա ձևի թե բովանդակության փոփոխություն է:

### **Հոդված 9**

1-ին պարբերությունից զանգվածային հրապարակային միջոցառումներ կազմակերպելու հարցում երեխաների նկատմամբ կիրառված բացարձակ արգելքի վերացումը ողջունելի է, սակայն անհրաժեշտ է պարզաբանել, որ նրանք իրավասու են նաև կազմակերպել ոչ զանգվածային միջոցառումներ: Որևէ կերպ հստակեցված չէ, թե ոստիկանության և ազգային անվտանգության ծառայողները երբ կարող են կազմակերպել հրապարակային միջոցառումներ կամ մասնակցել դրանց:

Արգելված վայրերը ներկայում ավելի հստակորեն են սահմանված 3-րդ կետում, և ավելի պատշաճ կերպով է նախատեսված դրույթը մոտ գտնվելու չափի վերաբերյալ, սակայն հատուկ գոտիների և նշանակություն ունեցող տարածքների փաստացի շրջանակները պարզ չեն (առնվազն ինձ): Կամուրջների օգտագործման ընդհանուր արգելքը, որին առարկել էր վենետիկյան հանձնաժողովը, թերևս չափազանց խիստ է, սակայն հավանական է, որ Եվրոպական դատարանը դա ընդունելի կհամարի, եթե մերձակայքում կան այլ վայրեր, որոնցում կարելի է անցկացնել այն հավաքը, որի համար կամուրջն էական դեր է խաղում:

### **Հոդված 10**

Վերնագիրը հիմա ավելի պարզ է, և ավելի պարզ է դրույթի կառուցվածքը, սակայն նախկինի նման դրանում չի նշվում, որ թույլտվությունը փաստացի անհրաժեշտ է:

3-րդ կետով նախատեսված՝ ընտրական հավաքների դեպքում ծանուցման պահանջից բացառությունը շարունակում է վկայել այն մասին, որ ծանուցման/թույլատրության պահանջ կիրառելիս հասարակական կարգուկանոնը գերիշխող մտահոգությունը չէ:

4-րդ կետում լուծված չէ սպոնտան զանգվածային հավաքների դեպքում ծանուցման պահանջի գործողության շրջանակի խնդիրը. սա չի նշանակում, որ դա պետք է հանել, սակայն անհրաժեշտ է դրա հիմքում դնել այն նախապայմանը, որ դա պետք է պրակտիկայում ողջամտորեն հնարավոր լինի:

### **Հոդված 11**

Նոտարի հետ կապված պահանջի մեղմումը 4-րդ կետում ողջունելի է:

### **Հոդված 12**

Ինչպես և նախկինում, հոդվածը շարունակում է պահպանել այնպիսի կառուցվածք, որում ենթադրվում է, որ հավաք անցկացնելու համար անհրաժեշտ է հիմնավորել դրա անհրաժեշտությունը, և չի գործում այն մոտեցումը, որի դեպքում հակառակ կողմը ստիպված կլիներ ապացուցել, թե ինչու չի կարելի անցկացնել հավաք:

Ինչպես և նախկինում, 1-ին պարբերությամբ նախատեսված չէ առաջարկվող հավաքի հետ կապված մտահոգությունների վերաբերյալ կազմակերպչին ծանուցելու պարտականությունը:

5-րդ կետում հղում է արվում 6-րդ կետին, սակայն իրականում հղում պետք է արվի 8-րդ կետին:

7-րդ կետով ավելի է հստակեցվել որոշման մասին ծանուցելու մեխանիզմը:

8-րդ կետով ավելի կոնկրետ ժամկետ է նախատեսվել որոշումը կայացնելու համար, սակայն իմ մտահոգությունները դրանով չեն փարատվում (տես առաջին եզրակացության 57-րդ կետը), որոնք վերաբերում էին այն հարցին, որ պետք է հնարավոր լինի հենվել որոշման բացակայության վրա: Բացի այդ, ըստ նրկույթին, որոշումների կայացման վերջնաժամկետ չկա այն դեպքերում, երբ ծանուցման քննությունն ուշացել է:

### **Հոդված 13**

Ինչպես և նախկինում, 1-ին կետը շարունակում է բացառել միևնույն ժամանակ միևնույն վայրում երկու հավաքների անցկացումն առանց այդ երկուսի անցկացման հնարավորությունը նախապես քննելու պահանջի: Այն պահանջը, որ բոլոր կազմակերպիչները պետք է կազմակերպելու իրավունք ունենան, անհարկի է, եթե կան այնպիսիք, որոնք կարող են կազմակերպել, քանի որ մերժման հիմք չէր լինի, եթե միայն նրանք դիմեին: Երթևեկության ընթացքը խախտելու չափանիշը նախկինի նման չափազանց աղոտ է, սակայն, չնայած որ կյանքին սպառնացող վտանգի դրույթը բարելավվել է, մերժումը հիմնավորելու համար նախկինի նման պարզ չէ, թե ինչ աստիճանի առճակատման

ակնկալիքն է բավարար: Այս դրույթն ամբողջությամբ սխալ է, քանի որ դրանում նախկինի նման ենթադրվում է, որ արգելքն ինքնաբերական է, փոխանակ այնպիսի պահանջ սահմանելուն, որ ուսումնասիրվեր, թե արդյոք պոտենցիալ պրոբլեմները հնարավոր կլինի լուծել ոստիկանական հսկողության միջոցով:

3-րդ կետով նախատեսված՝ դատավճռի ժամկետն այժմ շատ ավելի պարզ է:

Ուրախալի է, որ 7-րդ կետից հանվել է նոր ծանուցում տալու պահանջն այն դեպքում, երբ լիազոր մարմինն այլընտրանքային առաջարկներ է կատարում:

#### **Հոդված 14**

Հարկադիր դադարեցման համար առկա միջոցները նախկինի նման մնում են անպարզ:

4-րդ պարբերության մեջ ավելացվել է ողջունելի դրույթ՝ դադարեցման որոշումների համաչափության հանգամանքի տեսքով:

#### **Հոդված 15**

Նախկինի նման անպարզ է մնում, թե արդյոք պատժամիջոցների վերաբերյալ մտահոգությունները լուծվել են, սակայն կազմակերպիչների և մասնակիցների համար քաղաքացիական պատասխանատվության վերաբերյալ մտահոգությունները, ըստ երևույթին, փարատվել են այդ դրույթը հանելու ճանապարհով:

Ջերեմի ՄաքԲրայդ  
18-ը ապրիլի, 2004թ.